«ԵՐԵՎԱՆԻ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԼՈԿԻ ԱՆՎԱՆ Հ. 122 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

02.04.2024թ N 700

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Անսերվ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ՝ 08265173
ք.Երևան, Վ.Վահանյանի փ., 52տ

«Երևանի Ալեքսանդր Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենքի մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2023-12-11-ին հրապարակվել է «ԹԻՎ122-ԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով ընթացակարգը ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին մասի հիման վրա, որին հայտ է ներկայացրել նաև «Անսերվ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը 19 դեկտեմբերի 2023թ-ին կայացած նիստում «Անսերվ» ՍՊԸ-ին ճանաչել է որպես ընտրված մասնակից 1-ին չափաբաժնի համար և անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով մասնակցին ներկայացվել է «ԹԻՎ122-ԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով պայմանագրի նախագիծը, որը վերջինս սահմանված ժամկետում իր կողմից ստորագրված և կնքված ներկայացրել է: Ֆինանսական միջոցների հատկացման մասին համապատասխան համաձայնագիրը 16 փետրվարի 2024թ-ին, այնուհետև նաև 20 փետրվարի 2024թ-ին ուղարկվել է մասնակցին՝ իր կողմից ներկայացված մասնակցության հայտի, ղեկավարվում նշված էլ.հասցեով՝ anservllc@gmail.com, սակայն առ այսօր մասնակցի կողմից համաձայնագիրը ստորագրված և կնքված տարբերակով չի ներկայացվել, որի արդյունքում վերջինս այլևս զրկվում է վերոնշյալ համաձայնագիրը ստորագրելու իրավունքից և «ԹԻՎ122-ԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով պայմանագիրը, միակողմանի լուծվում է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը իրավերով և /կամ/ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և/կամ որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը 790 000 ՀՀ դրամ է, իսկ պայմանագրի որակավորման ապահովման գումարը՝ 1 185 000 ՀՀ դրամ: Փոխանցումները պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գնձապետական «90000800069B/ պայմանագրի կատարման ապահովման / և «90000800066Գ»/ պայմանագրի որակավորման ապահովման / հաշվեհամարներին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ եթե սույն գրությունը ստանալուց հետո 5 աշխատանքային օրերի ընթացքում, Ձեր կողմից վճարվեն վերոնշյալ ապահովման գումարները, ապա «Անսերվ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վճարման կտրոնների բնօրինակները անհրաժեշտ է մուտքագրել «ԵՐԵՎԱՆԻ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԼՈԿԻ ԱՆՎԱՆ Հ. 122 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ:

«Երևանի Ալեքսանդր Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Տնօրեն Կ. Մխիթարյան